



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք, ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, Հեռ. (0236)6-00-30 , norkharberd.ararat@mta.gov.am

N 209
07 հուլիս 2016թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՒԲԻԿ ԿԱԲԱՆԱՍՏԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի հուլիսի 07-ին Նոր Խարբերդ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի տան, գրադարանի, երաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ- Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2016 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Խարբերդ համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 363 դիմում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ, տրվել են համապատասխան լուծումներ:

Համայնքապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 4000 տեղեկանք, ստացել 176 պաշտոնական գրություն մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Շաբաթը երկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասի չափազրման, սահմանների ճշգրտման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել պարարտանյութեր:

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները հետևյալ հարկատեսակների կազմել են՝

- հողի հարկ՝ 1217.469 հազար դրամ.
- գույքահարկ՝ 7966.516 հազար դրամ.
- տեղական տուրք՝ 964.5 հազար դրամ.
- ոչ հարկային եկամուտներ՝ 2709.105 հազար դրամ:

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել են Բանակի, Կանանց խաղաղության, Հանրապետության օրերը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպաստ՝ 1150.0 հազար դրամ:

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 14200.0 հազար դրամ:

Երաժշտական դպրոցին 8733.7 հազար դրամ:

Աղբահանության աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 2580.0 հազար դրամ:

Գազաֆիկացվել են համայնքի 14-րդ և 15-րդ փողոցները:

Ընթացքում են մարզադաշտի կապիտալ վերանորոգման աշխատանքները:

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան ճանապարհների բարեկարգումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակայությունների տեղադրումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՍՈ ԿԱԿՈՅԱՆ

28